# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար խոսափողների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի բացման նիստի/

ք. Երևան «10» հոկտեմբերի 2017թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Աղավնի Բուդուլյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Անահիտ Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Միմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար:

**1. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում իրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«Համիկ Օհանյան» Ա/Ձ-ի, «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի, «Զավեն Եղիազարյան Սերյոժայի» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են իրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ իրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

2.1 «Ձավեն Եղիազարյան Սերյոժայի» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2 «Հասմիկ Օհանյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ իրական շահառուների մասին տվյալներում (Հավելված 2.1) հայրանունը լրացված չէ:

2.3 «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ տուժանքի մասին համաձայնագրին (հայտի ապահովում) (Հավելված 10) կից վճարման պահանջագրում լրացված է վճարման պահանջագրի համարը (համաձայն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»՝ պարտադիր լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս), ներկայացման ամսաթիվը (վերոնշյալ կարգի համաձայն՝ պարտադիր լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը), և առդիր էջերի քանակը (վերոնշյալ կարգի համաձայն՝ լրացվում է շահառուի կողմից):

Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Մասնակիցների առաջարկած գներն են՝**

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «Հասմիկ Օհանյան» Ա/Ձ | | | «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Խոսափողներ | 750 000 | 150 000 | 900 000 | 895 000 | 179 000 | 1 074 000 |

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «Ձավեն Եղիազարյան Սերյոժայի» ԱՁ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Խոսափողներ | 677 500 | 135 500 | 813 000 |

**4. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը որոշեց.**

-հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2017թ. հոկտեմբերի 12-ին, ժամը 12:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտերում արձանագրված՝ իրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով "մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը" :

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Աղավնի Բուդոյան

Անդամներ՝

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Անահիտ Ավագյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան